«Ի ՍԿԶԲԱՆԵ ԷՐ ԲԱՆՆ...»

ԻՆՔՆԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

ՇՐՋԿԵՆՏՐՈՆՑԻ չորս քեռիս ռազմաճակատում էին, հիմա զորակոչվել էին հայրս և իր հորեղբորորդի Շաքրոն, որ նաև մորս հորաքրոջ որդին էր: Երկու քեռիս՝ Հայկազն ու Վարդանը, չվերադարձան, Շաքրոն չվերադարձավ, Ոսկան մեծ քեռիս վերադարձավ չփակվող վերքից արյուն տալով, խմել սկսեց և մինչև հիմա խմում է: Մյուս՝ Արտաշ քեռիս ռազմաճակատ չհասավ, ռազմաճակատը, կարծում եմ, չտեսավ. «դժվար տղա էր», երևի թե հոր՝ Իշխան պապիս համաձայնությամբ, զինկոմիսարիատն ուզում էր քաղաքը նրա անհանգստությունից ազատել, բայց նա կարողանում էր ամեն անգամ ետ փախչել: Արտաշը քաղցկեղից վերջերս մահացավ, Շաքրոն հինգ ժառանգ է թողել, զոհված երկու քեռիս ժառանգ չեն թողել և դա ամենացավալին չէ, քանի որ կենտրոններից ու ժամանակի քաղաքակրթությունից հեռու մեր Ահնիձոր գյուղում շատ տղերք անգամ լուսանկար չեն թողել, նրանց պատկերը իրենց տոհմի ուրիշ տղաների մեջ պատահաբար եթե կրկնվել է՝ ուրեմն որևէ պառավ երբեմն հիշում է, որ այդպիսի մեկը կար հեռավոր նախապատերազմյան ժամանակներում: Հայրս կա, իմ սիրած բացատն անցյալ ամռանը հնձում էր, թուխ մոշահավը տանու թռչունի պես ետևից քուջուջ էր անում, իմ հայտնվելու վրա շատ անհանգստացավ, բնիկի իր կարծիքով՝ ես իրենց՝ իր ու ծերունի հնձվորի բացատում օտարական էի: Բայց խոսքը հիմա այն պահի մասին է, երբ երեսուներեք տարեկան Իգնատ հիանալի ատաղձագործն ու հողի մունջ մշակը և իր հորեղբորորդի երեսներկամյա Շաքրոն՝ բրիգադավարը, ակտիվիստը և առհասարակ գյուղական զորեղների միջից միշտ որևէ պաշտոն պոկողը, կանգնած են շրջզինկոմի առջև, և նրանց ու զինկոմի միջև կանգնած է Իշխան պապս, որ ձեռնհաս մարդ է կամ հեռավոր Ահնիձոր գյուղի իր հարազատների խեղճությունը այդ օտար քաղաքում իրեն ձեռնհասություն է պարտադրում և ինքը պարտավորված է օգնել իր քրոջ զավակին և աղջկա ամուսնուն՝ հորս: Զինկոմին ուրեմն լավ բացատրելով՝ թե այդ երկուսը իրենց ետևից ութ որբ են թողնում, պապը կարողացել է մեկի

կամ մյուսի զորակոչն առայժմ հետաձգել. այդ մեկը պետք է մնա գյուղում և երկու ընտանիքի գլխին տղամարդ լինի: Մարդկանց ճակատագրի այդ տնօրենները ապրելու-մեռնելու ընտրությունը մի որպե իրենց՝ Շաքրոյին ու Իգնատին են թողել. իրենց մեջ թող վճռեն, թե ով է ճակատ գնում և ով է ետ գյուղ դառնում, բայց պապը հանկարծ գլխի է ընկել, որ ռազմաբանակային կյանքի շուքը գուցե հրապուրի լավ ձիու, երգի, լավ հագուստի, քրոմե սապոգների ու կարգադրությունների Շաքրոյին և նույն այդ շուքը վանի ամաչկոտ ու մարդախույս Իգնատին, և պապը ինքն է ընտրել. «Իգնատին տալիս եմ... Իգնատին եմ տալիս, այտա, Իգնատն անլեզու անճար է, գյուղին Իգնատը չի պետք»: Այնպես պատահեց, որ Իգնատի ետևից նաև Շաքրոյին տարան. զինվորական շինելի մեջ եմ հիշում նաև Իշխան պապիս, մեր ութ անտեր երեխայի վրա Դսեղ գյուղից դարձյալ երեք որբ ավելացավ, հեռավոր Սանահին գյուղից Ահնիձոր բերվեց նաև Իշխանի հարյուրամյա մայրը, ձմռան երկար գիշերներին երեխաներից ավագներս կաթնակերների ու պառավների այդ դասարանի համար հազիվ գիրկապով ուզում էինք կարդալ այդ տան միակ գեղարվեստական գիրքը՝ նկարների շրշուն պահպանիչներով «Սասունցի Դավթի» 1939-ի հոբելյանական շքեղ հրատարակությունը, և մեր բոլորիս տատը՝ Իշխանի քույրը, գիրքը ձեռքներիցս առավ ծալեց, խաբեց, թե հենց այդ պատմությունն է պատմում և պատմեց իր կյանքի մղձավանջը: Ես երբևէ գուցե կարողանամ արթնացնել հեռավոր այդ գիշերների մանկական մեր շունչը, ըմբռնելը, չհասկանալը, վախը, բացեիբաց ամեն ինչ կորցնելուց հետո պառավի դարձյալ գաղտնապահությունը և ակնարկները այն դեպքում, երբ այդ կյանքի անգամ հեքիաթացված հստակությունը երեք-տասը տարեկան երեխաներիս քիչ բան կմատներ, գուցե կարողանամ, բայց վստահ եմ, որ անպայման պատմելու եմ այն մասին, թե ինչպես տոհմիկ աշխատավորին կանգնեցրել են իրենց առջև, զննում ու վճռում են, որ պիտանի չէ մարդկանց միջից իր երեխաների հացը կորզելու, և ինքը համաձայն է:

ՄԵՐ ԲԱԽՏԸ ԲԵՐԵՑ. հավաքը Մախաչկալա տեսակավորել,

խոտանը ետ էին ուղարկել զինկոմիսարիատներին. հայրս իր նման չորսի հետ եկավ, այն չորսը դարձան մեր կոլտնտեսության ուրախությունը, շրջզինկոմիսարիատը հորս ուղարկեց աշխատանքային գումարտակ անտառահատման - Դսեղից Ահնիձոր մեր անտառներում ծառ հատելու, ջարդելու, ճնհալի ու հեղեղների ջրերով առաքելու, ամբարտակ կապելու, փայտը որսալու, բարձելու, սղոցելու: Պատերազմը վերջանալու հետ անտառը դարձյալ անտառտնտեսությանն անցավ, և անտառտնտեսությունը հանվեց զինկոմիսարիատի ենթակայությունից, բայց բանակային ժամանակների բովանդակությունը դժվար լքեց տնտեսական այդ հիմնարկի հարմարին ձևը. սովորել՝ բանվորությանն օրապահիկ հաց էին տալիս, շրջակա կոլխոզների հետ անտառային բացատների իրավունքներ էին վիճարկում, խոտհարքների ու վարելահողերի տեր էին, քաշող ուժի՝ եզան ու կաթնամսային տնտեսություն ունեին, մի տեսակ՝ և՛ բանվոր էին, և՛ գյուղացի, և հայրս միտք չուներ այնտեղից մեր աղքատ կոլտնտեսություն անցնելու, ուրեմն Իշխանի կարծածի չափ անպիտան չէր: Իշխանի աղջիկը կոլխոզային 120 աշխօր նորմայի տակից դուրս չէր գալիս, և տնամերձ հողից զրկվելու վտանգը ամեն անգամ կախվում էր մեր տան գլխին: Մեկից ավելի անգամ կամ մի անգամ ու շատ տպավորիչ եմ լսել. «Քոնը էս կածանը ու էն չորս պատն է, էս գյուղում դու ուրիշ ունեցվածք չունես»: Հարևան-բարեկամներից խնդրված աշխօրերով, մորս հիվանդության վկայականներով, կոլխոզի համար հորս ու իր բանվոր-ընկերների գիշերային հունձերով, երեխաներիս աշխատանքով նորմայի այդ մեծ պարապը ամեն անգամ լցվում էր, և տունը հիմա կանգնած է իր այգում ու բանջարանոցում:

Մեր գյուղի ղեկավարությունը փոխեցին: Պատերազմից առաջ Աբգարն ապավինել էր պղնձահանքերի կարգուկանոնավոր գյուղմասին, իր մեծ ընտանիքի գույնը տեղն էր բերել, տան մեջ էր դրել, անասուն ուներ, կարծեցին կառավարել կկարողանա Ահնիձոր ամբողջ գյուղը: Այն, ինչ պատերազմն ու նախկին ղեկավարները չէին հասցրել, մի տարվա մեջ ինքը քանդեց, թողեց այդ ավերակ տնտեսությունը

և մի կերպ փրկեց սեփական մեծ ընտանիքը՝ հիմա էլ ապավինելով քիմգործարանի գյուղմասին, բայց այդ՝ մի տարի հետո, հիմա կուսկազմակերպիչի հետ մեր տուն են բարձրանում, գիտեն, որ Իգնատը տանն է, և գիտեն, որ գյուղի հետ նրան պիտի պինդ կապեն:

Բացակա տարիների համբավը, այդքան տղայի իզուր կորուստը Իգնատի մեջ այդ Աբգարի նկատմամբ հարգանքի նման մի բան եթե անգամ առաջացրել են՝ դա հիմա քամահրանք ու ատելություն է դառնում այն պատճառով, որ Աբգարի ընկերակիցը իր՝ Իգնատի արհեստին է, մեխ ու ուրագ բռնելը Իգնատից է սովորել, բայց քիչ ու թաքուն է բանեցնում, չի բանեցնում, որպեսզի գյուղական անվարձ մշակությունը վրան չհաստատեն, չի մոռացել կուսակցություն ընդունվել, կուսակցության շնորհիվ ահա պաշտոնի պես մի բանի է հասել և ավագ ընկերոջ ու արյունակից եղբոր վրա վերահսկիչ իրավունքով է գալիս - կուսկազմակերպիչ Սարգիս Մաթևոսյան: Սուտ կլինի, եթե ասեմ. «Հիշում եմ, որ եկան կանգնեցին ու ասացին. մեռնեմ կոլխոզային օրինակելի կանոնադրությանը. կամ արի կոլխոզ, կամ տնամերձդ հանձնիր»: Մեր կողմերում վաղուց այդպիսի կոպիտ հարվածներ չեն լինում: Ճիշտ չի լինի, եթե ասեմ. մինչև վերջին թիզը ցանված ու գուրգուրանքով խնամված հողը նրանք այնպես զննեցին, որ զուտ կարտոլի այդ ցանքը մեր աչքում իրենից մեծ ու հարուստ նշանակություն առավ. մեր կողմերում շատ լավ ու շատ վատ բաները չտեսնել տալու ազնվական սովորություն կա: Իգնատի սև թշնամանքը, ոչ, նրանց թույլ չէր տա ձեռքները ունքներին դնել ու մորս հետ տնավարի կատակել. «Տանտիկին, հեռու քաղաքներից էս ինչ անծանոթ հյուր ես ընդունել ու մեզանից թաքուն ես պահում»: Երևի թե իսկապես ոչինչ չեն խոսել, միայն եկել լուռ կանգնել ու գնացել են: Բայց ահա փափուկ ու ծանր ճնշումը և հորս մոխրագունած դեմքը, գունատված հայացքը հիշում եմ: Այդպիսի մի վիճակի հետո «Պուգաչովյան բունտի պատմության» մեջ հանդիպեցի. թուրքական ճակատից ետ ղրկված հիվանդ Եմելիանը ստանիցա՝ հինգ մանր երեխայի իր տուն է եկել շիկակարմիր ձիով, Բենդերի առմանը մասնակցելու, վիրա-

վորվելու, Չերկասկում բուժվելու մասին փաստաթղթերը կարգին են, բայց նա պիտի որ ձի չունենար. ստանիցայի ատամանը հարցնում է՝ «էդ ի՞նչ ձի է». «Ձի է, իմն է, ասում է, Տագանռոգի կողմերից առել եմ». ատամանը գիտի, որ ձին գողացված է, բայց նրան ուղարկում է գրավոր վկայություն բերելու առ այն, որ շիկակարմիր ձին տիրոջից վաճառված և Պուգաչով Եմելիանից առնված է. Պուգաչովը գիտի, որ ատամանն իրեն միևնույն է ձերբակալելու է, բայց վկայականի ետևից Տագանռոգի գյուղերն է գնում. նրա ատելությունը հետո Կազանի բանտում է պոռթկալու, հիմա հնազանդորեն, ատամանի հայրական ներողամտության հետ գուցե հույս կապելով, իրեն ձի ծախած գյուղացի է փնտրում:

Այդ մաքուր, փարթամ ու աղքատ հունիսին մայրս նրանց գրպանը մի-մի խնձոր դրեց: Երեխաներս հետո խնձորի այդ պահուստը չգտանք, այդպիսի պահուստ չկար, զուտ այդ երկու խնձորը պահվել էր նրա՛նց համար, ովքեր այդ տան վրա իշխանությամբ կգային: Ապա, ճանկռտված, բանակային վերնաշապիկը պատռված, մորս խոսքով՝ ծեծված,- բայց նա ծեծվող չէր, նրան կարող էին ընդամենը միայն ճանկռել,- հորս եմ հիշում. երեկոյի մեջ դռանը նստած է, մնում-մնում թքում է, մնում-մնում վռչում է, մայրս գուցե թե վերնաշապկին կոճակ է կպցնում: Դարձյալ մի պատմություն չհորինեցի, ոչ: Նորընտիր ղեկավարությունը «խնձորի այն օրը ըստ երևույթին պարտավորեցրել է այսինչ ձմեռանոցում գոմին տանիք կապել կամ հինը կարկատել և տնամերձից այդպիսով չզրկվել: Նորոգել իրենք էլ կարող էին, բայց այդ դեպքում կոլխոզի ու իշխանության առջև Իգնատն իր մեղքը քաված չէր լինի:

Ձմեռանոցի մեծ բացատը կոլտնտեսությանն էր, շրջակա անտառը՝ պետությանը: Իր մանկության, պատանության ու այսօրվա անտառում հայրս ծառ էր կտրել, շինափայտ էր դարձրել, քաշել էր ձմեռանոց, որ հնում իրենցը՝ իր հայր Ավետիքինն ու պապ Հովհաննեսինն էր եղել, շինափայտը հանել էր գոմի կտուրը, և այդտեղ անտառապահը վրա էր հասել: Հարևան գյուղացի այդ անտառապահը հորս ընկերը, ծանոթը կամ այն մարդն էր, որ եթե Մախաչկալա կամ

ընդամենը մեր շրջկենտրոնում հանդիպեին՝ պիտի անպայման ուրախանային, բայց այդ մարդը նույն Ահնիձոր գյուղում կոլխոզի նախագահ լինելու ցանկություն ուներ, կոլտնտեսությանը կողմնակիորեն օգնում կամ վնասում և միշտ իրեն զգացնել էր տալիս, - բայց հիմա քաշքշվել ու իրար ծանր խոսքեր էին ասել, մի տասնհինգ տարի իրարից խռով մնացին: Կրկնում եմ, բացատն ու գոմերը կոլխոզինն էին, անտառը՝ պետությանը, կոլխոզի ու պետության արանքում ինչո՞ւ էր իմ հոր ազնվական մաքրությունը տրորվելու, ինչո՞ւ էր նրանց՝ հորս ու անտառապահի բարեկամությունը փշրվելու այդ նեղ արանքում: Սա եթե պատմվածք լիներ՝ ահա պիտի ասեի. «Դժվար է, երբ կոլխոզի ուրագը բարձրացրել ես կոլխոզի մեխը խփելու, բայց կողմնակի մեկը գլխիդ կանգնում ու, ինքն էլ չգիտի ինչու, ասում է՝ իրավունք չունես»: Բայց սա այսպես թողնենք:

ԳՅՈՒՂԻ ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՈՒՀՈՒ փոքր տղան, այսինքն նա, որոնց հետ ծնողները մեզանում սովորաբար ապրում են, զինծառայության տեղից կին էր բերել, մայրը չէր ընդունում. նախ՝ հետը ի՞նչ լեզվով էր խոսելու, թե՞ ընտանիք չէին, խոսքի կարիք չէր լինելու, և ապա՝ միշտ ու ամենուր տարօրինակորեն գրավող այլազգուհու հետ գյուղի ահել-ջահելը, որպես թե լեզու է սրում, ռուսերեն կոտրատվելու էին և այդքան ուշադրությանը աղջիկը չէր դիմանալու, ո՞վ կդիմանա: Աղջկա վիճակը, որդին ու որդիները, առհասարակ ամբողջ գյուղը այդ կնոջ բողոքը խեղդեցին, բոլորը կարծես մի տեսակ համերաշխ համաձայնության մեջ էին, որ այդ կնոջ ապագան անցյալի չափ ծանր լինի: Բայց հիմա ամեն ինչ կարծես լավ էր, դռներին երեք սիրուն երեխա էր վազվզում, որդին, հարսն ու մայրը աշխատում էին, տունը թարմացել էր, կարծես այն օրերն էին, երբ պատերը նոր էին կապվել, երեխաները նոր էին, գորգը պատին իսկապես մեծ զարդարանք էր և Հիտլերի պատերազմն ամուսնուն դեռ չէր տարել: Ռուսս սակայն իր բախտին չդիմացավ. շարմաղ երեխաները, աշխատավոր ամուսինը, տունը, գործը, այդ սկեսուրի նման պահապանը քիչ թվացին, կարծեց լրիվ ուրախությունը ուրիշների կողքից տղամարդ պոկելով է լինելու: Իր գործն է, իմ ցավը հիմա ինքը չի: Դատարանը երեխաներին

իրեն է տվել, ինքը քոչել է քաղաք: Ամուսինը նոր երեխաներ ունի, նույնպես քաղաք է քոչել: Երկուսի համար էլ քաղաքում դժվար է, երկուսն էլ երեխաներին ետ այստեղ՝ տատի մոտ են ղրկում: Տատը կթվոր է, Վասիլի Բելովը գիտի ինչ ասել է հին սերնդի կթվորուհի: Կոլխոզային մատղաշի միջից նրանք իրենք էին ընտրում իրենց ապագա կովերը, անուն էին տալիս, կոլխոզային նախրի մեջ առանց անունի կով չկար: Պառաված անասունից դժվար էին բաժանվում, չէին մատնում, ուշ էին ասում՝ թե այսինչ կովի կաթը նվազել է: Կովերը նրանց ձայնը և հոտը ճանաչում էին, կթվորուհու բացակա ժամանակ ընկերուհիները այսինչ հատկապես քմայքոտ կովի տակ էին մտնում նրա տիրուհու գլխաշորով կամ ուսաշալով: Տպագրական մեքենայի դեմ գրչագիրների բողոքը պատմությունն արձանագրել է, կթիչ ագրեգատների և հորթերին ռետինե ծծակներով կերակրելու դեմ կթվորուհիների բողոքը՝ ոչ. նրանք լուռ ետ քաշվեցին և իրենց սրտում հորթերին որբ ու կովերին դավաճան համարեցին: Վաղ առավոտվա մեր երկրորդ՝ քաղցր քնի մեջ լսում եմ, ցածր, գրեթե շշուկով միայն մի անգամ կանչում է կթվորուհի հարևանին, որ դարձյալ որբևայրի է՝ «Զարիկ»: Շշուկով է կանչում, որովհետև դույլի չխկոցն ու կոշտ ձյան խռթխռթոցը լուսաբացի մեջ առանց այն էլ կանչի պես մի բան են և ապա՝ թոռները քնած են, հարևանի Մաթևոսյանը գրում է: Զարուհին բլրագլխի իր տնից, սա այստեղից՝ իրենց կածաններով, միմյանց ոտնաձայների ականջ դնելով գնալու, ձորը մտնելուց առաջ միմյանց սպասելու են, որովհետև հետո գերեզմանոցի գլխի կածանն է և երկուսն էլ այնտեղ չնայած շատ ծանոթ-բարեկամներ ու հարազատներ ունեն, աղջիկ ժամանակվա պես գերեզմանոցից վախենում են: Ես մինչև կհասցնեմ իր մասին մի երկու տող գրել, աղջիկ-թոռը, որ հիմա քնած էր տատի պաչն այտին և թեյը տաքացնելու հանձնարարությունը ականջում՝ արհեստագործական ուսումնարան կավարտի, կամուսնանա, երեխա կունենա, երեխային կբերի այստեղ տատի մոտ կթողնի՝ «մինչև էն գլխամեռը Ռուսաստանի խոպաններից գա»: Ե՛վ այդ ծոռնուհու համար, և՛ այդ ծոռնուհու մոր, և՛ նույնիսկ այն դուռայի՝ իրենց ամենաապահով օրերը այս կնոջ մոտ ապրած օրերն են մնալու: Այդ կինը ինձ կուրծք է

տվել. այն թարմ օրերում, երբ նոր ու աղքատ ընտանիքի կին լինելուց հրաժարվելով մայրս իրեն դարձյալ նետել է քաղաքի իր հորանց տուն, իմ խանձարուրը հայրս տարել է հարևանի դուռը, հարևանը հորս գրկից խանձարուրն առել, ներս կնոջն է տարել, հարևանն ու հայրս գուցե նույնիսկ կատակել են՝ թե թուրքը ճիշտ է անում, որ մի-երկու կնիկ է պահում, մեկը հորանց փախչի՝ երեխային մյուսները կպահեն: Ընթերցողի հետ իմ բազմաթիվ հանդիպումներից ամենադժվար՝ համագյուղացի-ներիս հետ հանդիպման երեկոյին այդ կինը շիփ-շիտակ կանգնեց ու այդպես էլ հրապարակեց. «Իիի՜, ցավդ տանեմ, ծիծ եմ տվել, է՜, ծիծ եմ տվել»:

ՈՒՆԵՎՈՐ ՏԱՆ ՀԱՅՈ-ՀԱՅԱՍՏԱՆ թափով, մեջքն ու կռները պինդ, քայլը հաստատ, ինչպիսիք հին գյուղում ստույգ գեղեցկուհի էին հա-մարվում, թուխ աղջկա հոր ձիու սանձերը հարևան գյուղում մարմնեղ, ուժեղ ու հանդուգն պատանի Արփիարը (թե՞ Արփյանը) բռնել, ճամփան փաստորեն կտրել, պահանջել է. «Որ բարևեցիր ու անցար՝ բոլորի մեջ ինձ ինչո՞ւ առանձին չբարևեցիր»: Պատասխանել է. «Ես քեզ հատուկ բարև չեմ տա ու աղջիկ չեմ տա. ես աղջիկ չունեմ հեղա-փոխականներին տալու»: Այնուամենայնիվ տվել է, և Հայաս-տան-Հայո գեղեցկուհին լավ օրեր դեռ ապրել է, մինչև որ 1915-ը կանգնել է հայ ժողովրդի դեմ՝ հեղափոխականների ու պահ-պանողականների, լուսավորչականների ու կաթոլիկների, ծերերի ու մանուկների, հարուստների ու աղքատների, իրենց ազգային պատկանելությամբ փքվածների ու ազգային պատ-կանելությունից անտեղյակների՝ բոլորի դեմ: Արփիար հեղա-փոխականը (Արփյա՞ն) ըստ երևույթին աննշան մեկը չի եղել, թուրքական հետախուզությունը գյուղ է թափանցել՝ նրա երի-տասարդ ընտանիքը առևանգելու, պատանդելու, ընտանիքի ետևից և իրեն ու իր խումբը քաշելու: Խմբի հետ Արփիարը գյուղի մոտերքն է եղել, տանը Հայոն խմբի հացը թխելիս է եղել: Նոր միայն քայլող, այդ օրը ըստ երևույթին հիվանդ ու լացող, մորը խանգարող Լևոնիկ երեխան քաշքշոցի մեջ թոնիրն է ընկել, հացթուխ ընկերուհին տնից դուրս է պրծել՝ դեպի խումբը, թոնրի մոտ Հայոն ուշագնաց ընկել է, մյուս Ազատ երեխային

առևանգիչները տարել են: Բայց Ազատը չի ապրել. հետա-պնդման մեջ առևանգիչները ձիու վրայից նետել են, երեխան այդպես էլ ուշքի չի եկել: Տասնչորս տարի հետո Բիթլիսի հայերից, քրդերից ու թուրքերից Գոջա Թումաս՝ Մեծ Թումաս մեծարված աշուղի նվազ, ամաչկոտ Մուշեղ որդուց Հայաս-տանը նորից է Լևոնիկ ունենալու, բայց չի ապրելու նաև այս Լևոնիկը: Հայաստանը նաև Ազատ է ունենալու և այս Ազատը 1981-ին ինձ պատմելու է իր մոր ու Արփիարի (Արփյանի՞) մեծ սիրո և մեծ ընկերության պատմությունը: Եղեռնի ձորերում ամուսինները միմյանց կորցրել, ամենուր ու ամեն օր փնտրել, հարցրել ու սպասել են իրարու, չեն գտել: Հայոն լսել է, որ Արփիարի Շողեր քույրը թուրքի տուն հարս է տարվել, չի դիմացել ու իր սիրուն վիզը դանակով կտրել է, բայց Արփիարը քրոջ մարմինը թուրքի գերեզմանոցում չի թողել, գիշերով գողացել, բերել հայ-քրիստոնյայի մի գերեզմանոցում հողին պահ է տվել. քրոջ և՛ գերեզմանափորն է եղել Արփիարը, և՛ նրա ծանր մարմինն է մենակ շալակել, և՛ պատարագիչ քահանան. երեխա ժամանակ էլ այդ մի քրոջը Արփիարը շատ էր սիրում: Եվ ապա լսել է, որ խուժանի պաշարումը ձիու վրա Արփիարը պատռել, իրեն ավերակ բերդից կռվողների մոտ է գցել, իսկ նրանք ոչ մարդու, ոչ էլ զենքի կարիք են ունեցել - միայն հացի. և տակի նժույգն Արփիարն իր ձեռքով է մորթել: Ինքը Հայոն իրեն որպես իր լսած Արփիարի ջոկատային, թիկնապահ ու եղբայր է պահել. կռվել է, ամայի երկրում քուրդ տղամարդու շորերով թափառել, քարանձավներում ու շամբուտներում անտեր երեխաներ է գտել, մի երկու անգամ հայտնվել է իր աղջկության ու սև-հարսնության գյուղերում, ուր արդեն նոր տերեր էին երևում, Խառակոնիս անունով հայի մի դատարկ շեն է ընկել՝ ուր հայ-քրիստոնյա մատուռում մի զարմանալի անկրակ լույս է եղել, զինակից երկու ընկերուհու հետ դուրս է եկել քարուքանդ Վան քաղաք, այդտեղ են ասել, թե անկրակ լույսի մատուռը Խառակոնիս մեծ գյուղինն է, հետո ընկերուհիներն ուզել են իրենց բերանով Նիկոլաև գեներալին մի-երկու կա՛մ խնդրանք, կա՛մ ծանր խոսք ասել, բայց լեզուն չեն գիտեցել և բացի այդ էլ Արամ-փաշան չի թողել, հեռացրել է,

և Հայոն մտքում դրել է գեներալ սպանել. երկու ընկերուհին խփվել են, մեկին՝ վիրավոր՝ ինքը երկար բերել է, նրա գերեզմանը հիմա կա, սահմանի այս կողմն, իր ծախսով ու Ազատ որդու ձեռքով Հայոն հիսուն տարի հետո ընկերուհու վրա քար է քաշել. «դավաճան գեներալն» Ալեքպոլ է եղել, սարերով Հայոն դուրս է եկել Համամլու, մեջքի գոտին՝ ոսկի, յոթ փամփուշտի հետ փոխել, վերադարձին - գիշերը մի գյուղի մոտ շները Հայոյին կծել են, մինչև առավոտ վերքերն ուռել, այդ աղքատ, վախեցած, թուրքերի արշավանքով տրորված, անծանոթ գյուղում օտար մարդկանց դռներին Հայոյին կապել են:

Տարիներ են անցել, գյուղերից դարձյալ հացի հոտ է եկել, իրիկունները նորից են լցվել գառների մայունով, Հայոյին ապաստանած հայ-քրիստոնյան հանդում հարևան գյուղի նախրապանին տեսել, թևը բռնել, բերել Հայոյի կողքին կանգնեցրել է - փոքր-մոքր, չնայած աշուղի տղա է՝ այստեղ անլեզու, աղքատ գաղթական Մուշոյին ու գաղթական Հայոյին իրարու կողքի կանգնեցրել է. հարմար է, որ իրարու նեցուկ լինեն ու ծածկ դառնան իրենց սեփական օջախի վրա:

Դարձյալ տարիներ են անցել, ժողովրդի երեսին գույն է եկել, ծաղկավոր հագուստ է երևացել Շիրակի ժողովրդի վրա, բերաններում պատմություններ են հոլովվել անցած-դարձածից, Գոջա՝ Մեծ մեծարված և ապա աչքերը բրված ու խավար ճամփաներին կորած Բիթլիսի աշուղ Թումասի դուստրերը՝ Մուշեղի քույրերը, իրենց հոր Բիթլիսի եղանակներով նոր պատմություններ են երգել Ղարսաբերդի դավաճանական անկման ու հայ գնդապետի հուսահատության մասին, զոհված բազում կտրիճների, իրենց դժբախտ հարսի՝ ֆիդա Հայոյի, նրա ընկերուհիների և ամուսին Արփիարի մասին: Երգը բարձրացել, Արագած սարն անցել, իջել է հովիտ: Կրակի մոտ նստած՝ հիշել, պատմել, երգել ու լսել են, և մեկը կրակից ետ է քաշվել, հին փամփշտակալները խաչել, մաուզերը կախել, յատինջին ուսերին առել:

Միշտ հորթարած, միշտ հանդում, այդքան հորթի մեջ մեկը թերևս արդեն իրենը՝ Մուշեղը մեկ էլ ի՞նչ տեսնի - քույրերի երգի Արփիարը սարի ետևից դուրս եկավ: Նրա ճանապարհից

քաշվում, կողքի ձորն է մտնում: Եկողը գալիս յառի պռնկին կանգնում ասում է. «Էդ ինչի՞ պահվեցիր. գե՞լ եմ, գազա՞ն եմ, դուրս արի. էս ճամփեն ո՞ւր է տանում. քու գյուղում Հայաստան, Հայո անունով հա՞րս կա, է՞ս է քու գյուղիդ ճամփեն»: Իրիկունը հորթերը տուն են դառնում, ամենքն իրենց դռները գտնում են, հորթարածը չկա: Հայոն ու Արփիարը թախտին իրար կողքի նստել, հարցնում ու լաց են լինում, պատմում ու լաց են լինում, ամբողջ ժողովուրդը հավաքվել նայում է: «Մարդ ես գտել, երեխեքդ են», ասում է: «Երեխեքս են,- ասում է.- Ազատն է, Լևոնիկն է, Շողերը»: «Վեր կաց,- ասում է,- քեզ տանում եմ»: Նայում տեսնում են Մուշեղը տուն չի մտնում, իր դռանը կանգնած՝ ճիպոտով տրեխի քթին խփում է. տուն չի մտնում, չի խառնվում, Արփիարին է թողել Հայաստանի էլ, երեխաների էլ և հենց իր էլ պաշտպանությունը,- որովհետև ժողովրդի մեջ լրտես մարդիկ կային, անցյալը խառնում ու մատնում էին: Նույնիսկ կատակող է եղել. Մուշեղի քրոջ տալը էն հին, հարուստ ժամանակների նման ձեռքը կոնքին է խփել, ասել. «Քու Հայոյից իմ ի՞նչն է պակաս, կնկա ես եկել՝ ես ահա»: Ու նաև բացատրել է. «Երկու ամսվա հարս եմ, ինձ իմ մարդը դեռ չի սովորել»: Բայց խեղճ աղջկա կատակը երեսին սառել է, որովհետև պատասխանը ապտակի նման է եղել. «Քեզպեսները,- ասել է,- քեզնմանները ոտիս առաջ թափված էին Թավրիզից Ռոստով ու Թիֆլիսից Ստամբուլ»: Եվ այլն:

Վերջին այս մանրամասները ձեռագիր տետրակում չկան: Ձեռագրի տերը՝ բյուրեղապակու գործարանի բանվոր Վալոդ Մխիթարյանը, երբ Արփիարը գյուղ է եկել, դեռ ծնված չի եղել: Վրեժի ծանրության տակ հավիտյանս ճապաղված մարդու՝ Արփյան ֆիդայու հանկարծական հայտնության, հեռանալու, այդ խեղճ ընտանիքի վրա խորթորեն նայող հատկապես մեկին ու բոլորին սպառնալու, հինգ տարի հետո բանտարկվելու և կորստյան, Մուշեղի աննկատ մահվան, աղքատության, սրբած աղքատության ու մանրիկ իշխանավորների հիմար չարության մասին ինձ Ազատը պատմեց: Բարձրահասակ, ուսերն արդեն կախ, ձեռքերը երկար, համարյա թե անգրագետ Ազատը գիտակ որմնադիր ու լավ հողագործ է, տարօրինակ սովորություն ունի -

կոշիկը մեր միջանցքում հանում է, գլխարկը՝ ոչ, գլխարկը գլխին նստում ու լուռ նայում է: Աչքերից մարդկայնություն է թափվում: Երբեմն, լեզվի խախուտ աշխարհում ճոճվելով՝ ճիշտ դեպի այնտեղ է մղվում, որտեղ մենք մեր կոչումով ու լեզվի գիտությամբ որպես թե հաճախ ենք լինում, և միայն Աստված է տեսնում, որ թշնամուն հանդիպելուց ամեն անգամ մենք խուսափում ենք լեզվի ճկուն գալարներով, իսկ ինքը ուղիղ դեպի թշնամին է գնում, և այդ րոպեներին նա մոր թափառումի կածաններին է, մոր հետ՝ «քուրդ է», հանդի խեղճ գառան գող է, դանակով փոս է փորում ընկերուհու համար, անցորդ օտարի պես մի բաժակ ջուր է ուզում իր տան նոր տերերից: Մոր կածաններից դուրս է գալիս դանակը ուղղակի ձեռքին, աչքերը մեռյալ մետաղի փայլ են տալիս:

Ժամանակին հին ոճի կտրիճ է եղել. ապակե բաժակ է ծամել, ատամներով ընկերոջը տաբուրետի վրա բարձրացրել է, ոտքը ոտքին ու գլանակը բերանում՝ ընկերը եվրոպացի օրիորդի նման լուսանկարչին ժպտացել է... այսինքն թե ինքը խեղճ Մուշեղի տղա Ազատը չէ, իրենից ավելի որևէ բան ինքը անպայման նշանակում է, ինքը գրեթե Արփյանի ժառանգն է: Իսկ երբ այդպես էլ Արփիար չկնքված Վալոդը երկար շաբաթների ու տարիների մեջ գրի է առել իրենց տոհմի մղձավանջը, Ազատին թվացել է՝ թե այդ որևէ բանը վերջապես հայտնաբերվեց ու անմահությանը պահ տրվեց:

Մինչև ինձ հասնելը ձեռագիրը մի ակադեմիկոս պատմաբանի մոտ էր եղել ու վերադարձվել: Փոքրամարմին, փակ, պինդ ու ջղային Վալոդն ասաց. «Առողջարանի այգում նարդի էր խաղում, տետրակը տվեց ու չխոսեց»: Հետո ձեռագիրը մեր նշանավոր վիպագրի ձեռքն էր անցել ու, հատուկ հերոսական ու հատուկ ողբերգական ոչինչ մատնանշելով, դարձյալ վերադարձել: Ապա, 78-ի աշնանը, Ազատը հյուրանոցի միջանցքում նստել ու Վիլյամ Սարոյանին սպասել էր: Այս Հայաստան գալուց առաջ Սարոյանը եղել էր իր ծնողների Բիթլիսում, պապենական տունը թերևս գտել էր, տան շեմքին՝ տեղի քուրդ աշուղից փառաբանվել էր գուցե աշուղ Թումասից մնացած հին երգով,- այդ հայրենակցությունն ահա

մեծ ամերիկացուն պիտի հովանավոր դարձներ Վալոդի ձեռագրին:

Պացիֆիզմի բեկված ու շաղված երթի այդ վերջին ճամփորդի ուղեկիցը Հայաստանում այդ օրը ես էի, և բնական է, որ ձեռագրի հոգսը Սարոյանն ինձ էր թողնելու: Սարոյանի առաջին հարցը ինձ. «Ի՞նչ մտադրությամբ սկսեցիր գրել»: Հայերենի նրա պաշարը քիչ էր՝ թերևս մի երեք հարյուր բառ, բայց շողքով ու մարմրոցով գոյող ողջ կյանքը նրա լեզվի մեջ ճիշտ այն էր ասում, ինչ իր՝ այդ կյանքի էությունն է, ինչ ինքը այդ կյանքն ուզում է ասել, բայց մենք իրեն չենք օգնում: Սարոյանը իր սկզբի մասին՝ այն տարիների ջահել աստծուն թեթևակի հեգնելով և աշխարհի մռայլ լրջության վրա զարմացած. «Երբ սկսեցի՝ ես վստահ էի, որ կյանքի ընթացքը շրջելու եմ»: Եվ ապա, ապարդյուն այդ ջանքի մեջ իրեն այնուամենայնիվ մենակ չթողնելով. «Կարծեմ Լև Տոլստոյն էլ այնտեղ էր» («Կարծեմ ինք Թոլսթոյ ալ հոն էր»): Եվ հետո՝ հեռուստահաղորդմանը. «Շատ եմ հարգում աշխարհը փոխելու Տոլստոյի ջանքը: Աշխարհի փոխարեն ինքը Տոլստոյն է փոխվում: Սիրում եմ հեղինակի այդ փոփոխությունը»:

ԱՄԵՆ ԱՆԳԱՄ, ԵՐԲ ԱՅԴ Ազատը մեր շեմքին հայտնվում է ձեռքին երբեմն խաղողի զամբյուղ, երբեմն պանիր թևատակին, երբ իր ներկայիս գյուղը ամենևին էլ անասնապահական չէ, երբեմն շուշանի թթու, որ քույրերն են ղրկում Ազատի մանկության սարալանջերից, և ամեն անգամ, երբ ամենալեցուն դահլիճի բազմաթիվ հարցերից սկսում եմ հստակորեն հասկանալ, որ ամենևին էլ ընթերցողական լայն շրջանների հեղինակ չեմ և այդպիսին դառնալու համար հարկավոր է վթարային որևէ վիճակի թեկուզ սոսկ նկարագրություն անել, և ուրիշ շատ ու շատ անգամներ, թվում է անընդհատ, ես ինձ խոստանում եմ հիմա նստել և այդ «ֆիդա Հայոյի» կյանքից ժողովրդի կործանման ու վերելքի պատմություն ստեղծել, բայց իրո՞ք պիտի ստեղծեմ, գոնե կարողանալո՞ւ եմ հիմնովին ընթերցել Վալոդ Մխիթարյանի ձեռագիրը և սխալների գոնե ուսուցչական ուղղում անել:

Մեծ Մարտիրոս Սարյանը՝ այդ ժամանակների վկան, հուշերի՝

գեղանկարչության ու քաղաքացիության փառահեղ դասերի իր գրքում պատմում է, թե ինչեր է տեսել այն հեռավոր օրերին. սբ. էջմիածնի խուցերից ու պարսպատակերից մեռել հավաքող եզնասայլեր, երեխային իր թելիկ մազով պատանող մայր. պատանքի կտորը, հասկանալի է, պիտի որ այդ մոր շապիկից լիներ: Եվ այդուհանդերձ, նկարչական իր վիթխարի ժառանգությունը հայոց գեհենի այդ յոթնամյա տևողության պատկերաշարից որևէ գիծ ու գույն չի արձանագրում, և ավելին՝ այդ տարիները նրա ստեղծագործության վերընթացում նշանավորվում են ծաղիկներով ու դիմանկարներով, որոնք ուղղակիորեն ոչինչ չեն ասում այդ տարիների մասին: Եվ ապա, քսանհինգ տարի անց, կարծես արգելելով մտածել՝ թե «Ագուլիսի (քաղաքիկի) ծաղիկները» պատահական վրիպանք էին, գերմանական ճակատից վերադարձող հայ զինվորներին Սարյանը դիմավորեց նո՛ւյնպես՝ «Ծաղիկներով», գույնի, լույսի, կարոտի ու շենշող լավատեսության այդ կտավի լրիվ անվանումն է՝ «Ծաղիկներ Հայրենական Մեծ Պատերազմի Հայ Մարտիկներին»: Իրական «գեռնիկան» մոլեգնել է ահա այս երկրում և միայն այստեղ, բայց «Գեռնիկա» կտավն այստեղ չի մոնտաժվել: Հետեղեռնյան ու երկրի խորհրդայնացման հատկապես առաջին տարիների սարյանական յուրաքանչյուր ու բոլոր կտավները ձգտում են միայն մի բանի՝ կայուն ներդաշնակության, հավասարակշիռ այնպիսի ներդաշնակության, որ կործանված մեծ ամբողջի պատառիկներից ի մի եկող Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության գերբը, որի նկարիչը ի դեպ հենց ինքը Սարյանն է, ասես թե հառնում է նրա յուրաքանչյուր բնապատկերից, ինքը Սարյանն է ասես նախագահ ողջ Հանրապետության՝ նրա բոլոր բնակիչների ու լանդշաֆտի վրա:

Իրեն ու իր նկարչությունը կարելի էր ինչ-ինչ դիրքերից անոմալիա (բնազանցություն) համարել, բայց ահա Հովհաննես Թումանյանը. 1919-ի Թումանյանը՝ որդուն, եղբայրներին, ամբողջ Արևմտահայաստանը կորցրած Թումանյանը. բանաստեղծություն տվայտող որբ պատանիներին հավաքել հորդորում էր. «Ձեր սրտերը մաքուր պահեք և ամենալավ ու բարի զգաց-

մունքով լիքը, աշխարքին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով: Եվ արդեն ստեղծագործական շնորհքի, բանաստեղծության բնությունն այդպես է իր ծնունդից: Ապոլոնը, որ բանաստեղծությունն է ներկայացնում և արևն է միաժամանակ, իր կյանքում երբեք մութն ու մռայլը չի տեսել: Որովհետև արևն է ինքը և իր հայացքը՝ արևի, և ամեն մռայլ չքանում է իր հայացքից: Արևի նման նայեցեք աշխարքին»:

Ո՛չ իհարկե իմ ազգային մեծերի ուղիղ խոսքուխորհրդով, այլ նրանց գործի ու կյանքի խորհրդով (նաև երգահանների, նաև ճարտարապետների, նաև էպոսի, հեքիաթի, հայոց լեզվի ու հայ ժողովրդական երգի, այն ամենի, որ մի բառով կարելի է բանք հայոց կոչել), այլև իմ «զուտ հայացի արյան», «զուտ ազգային», «զուտ նահապետական», «զուտ պահպանողական, իգական, մայրական, ստեղծագործական սկզբունքի» թաքուն թելադրանքով՝ ինձ դուր են գալիս ազգային բոլոր մշակույթներից այն մշակույթները և այդ մշակույթների մեջ հատկապես այն արվեստագետները, որոնք նույնպես են «զուտ հայացի», «զուտ նահապետական, զուտ մայրական, իգական, պահպանողական, ոչհեղափոխական սկզբունքի», որոնք նախաստեղծ քաոսը տեսքի ու հավասարակշռության են բերում՝ իրենց վերստեղծվող աշխարհից վտարելով վթարային հնչյունը, գույնը, ձևը, ասես նույնիսկ վախենալով վթարային իրավիճակի ընկալումից և առավել ևս արտացոլումից: Նրանցից ոմանք, ինչպես Տոլստոյը, նույնիսկ հավակնում են կանգնել աշխարհաստեղծման՝ բանավոր լույսի ակունքներում, մեկ և նույն ակունքում և՛ անցյալի, և՛ ներկայի ու ապագայի, և աշխարհը նորովի ստեղծել:

Ազգային զարթոնքների, բարեշրջումների ու հեղափոխությունների իրենց մեծ ժամանակներում գրականության ու գրողի նման դիրքավորումը եթե ըմբռնելի և անգամ պարտադիր էր, ապա նույնքան անհասկանալի, արդեն հերոսականության մետաֆիզիկական վիճակին հարող մի այլ բան է թվում նման դիրքորոշումը այսօր, երբ կարծես այլևս պարզվել է, որ կյանքը այնքան էլ մեր կամ նույնիսկ արքաների խոսքով չի առաջնորդվում, իսկ մենք ինքներս էլ ամենևին կոմս ու Տոլստոյ

չենք, այլ վերջին պատերազմում սերնդովին որբացած «կարտոլի տղերք», գրեթե նույնպիսի որբեր, որպիսիք բոլորել էին 19-ի Թումանյանին և նրանից կյանքին արևային հայացքով նայելու հորդոր էին առնում: Ինձ հպարտացնում է հատկապես իմ սերնդի, որ կարելի է իր ոչ քիչ հաջողակներից այսինչի կամ այնինչի անունով կոչել և այդ սերնդի մեջ հատկապես այսինչի տիրոջական հայացքը կյանքին, հենց տիրոջական, չնայած մեզանից ոչ մեկն է ոչ կոմս, ոչ Տոլստոյ. օրորոցի երեխա է թե պառավ, առակավոր է թե անառակ, չարիք է թե բարիք՝ ամեն ոք ու ամեն ինչ այստեղ հեղինակի կառավարող ձեռքի ներքո է, բոլոր դրսևորումների թաքուն պատճառները այսինչը գիտի, բարու համար զսպորեն ուրախ է, չարիքը դեռ չի կարողանում հեղինակին մատնել անզոր չարության, հեղինակի տիրական աչքը անգամ թշնամու մեջ ընդամենը կորսված եղբայր կամ անառակ որդի է փնտրում:

ԵՍ ՆՐԱՆՑ ՈՐԴԻՆ ԵՄ, նրանցից եմ ստեղծվել, ինձ նրանք են ստեղծել - այդ մունջ մշակը, որ հենց որպես մշակ է խոտանվել, այդ հարևանուհին, որ աղջկորեն չի խրտչել ու իր ջահել մարմնին խորթ մի երեխայի կուրծք է տվել, այդ խեղճ հորթարածը, որ քաշվել է փառաբանված մարտիկի կնոջը իրեն կին անել, այդ մարտիկը, որ դաժան իրականության առջև մի շփոթվածն էլ ինքն է եղել, բայց ուրիշ շատ շփոթվածների գոյությունը իրեն թույլ չի տվել երկաթե ասպետի դիմակը նետել:

Նրանց մասին Ղուկասի Ավետարանն ասում է. «Եվ երբ քահանապետներն ու իշխանները նրան Գողգոթա էին հանում, կյուրենացի Սիմոն կոչված մեկին բռնեցին՝ որ հանդից էր գալիս, խաչը շալակը տվին, որ Հիսուսի ետևից բերի»: Սիմոնի մասին՝ միայն այսքանը: Ես ավելացնեմ, որպես և փայտի, և խոտի, և կարտոլի, այլուրի ու վայրի տանձի կոշտ բեռան տակ բազմիցս ու միշտ պրկված մեկը, որ իրիկունները հանդից դառնալիս միայն մի բան են ուզում՝ քնել: Եթե մայրդ կամ կինդ, որ քեզ պես մի գրաստ էլ իրենք են, ծնկներդ տաք ջրով տրորեին՝ քնի երանության մեջ երախտապարտ կլինեիր ամբողջ կյանքին՝ և՛ խաչողներին, և՛ խաչվողներին: Անդրեյ

Պլատոնովի Տակիր պատմվածքում այդ սիմոնը անժամանակության ու անտարածության մեջ անբառ գոյող անանուն պարսկուհի է, որ իր տակի ավազի պես անհաղորդ է իր վրայի թուրքմենի ու նրա քոչվոր կյանքի ծանրությանը, անհաղորդ է որպես Սիմոնը Հիսուսի խաչին ու վարդապետությանը: Ալեքսանդր Բակունցի պատմվածքում նա արդեն Տիգրանուհի անուն ու Վասիլ եղբայր ունի, եղբոր գեղջկական օրագրի մոտավոր բառերի արանքից՝ տասներկամյա այդ երեխան մի պահ աղջկական ուրախություն է ծաղկում, ճիշտ այնքան որպես, քանի դեռ եղբոր կինը «կոոպերատիվ» կարմիր կոշիկը չի սնդուկել, և ապա եղբոր պարտքի դիմաց հարևանի արտերում աշխատում ու ոտքը մտած փշից մեռնում է «անհայտ պատճառից, թաղումը եղավ ծախս 7 ռ.»: Ժան-Լյուկ Գոդարի կինոնկարում նա մեր բոլորից մեկն է, յուրաքանչյուրիս նման՝ մարդկային ջերմություն է ուզում, բայց ինչպես «խաչի Սիմոնը» լայնաթիկունք՝ ինքը լայնակոնք է ծնվել և կոչվում է խոնարհաբար ծառայեցվելու մարդկանց կենդանական կարիքներին, տիրոջից տիրոջ է անցնում, գնի վրա տերերը զենք են հանում, միմյանցից աղջկանով պաշտպանվում են, պատռված հագուստի պես փողոցում աղջկա մարմինը գցում ու իրենք հեռանում են միմյանց առաջվա պես այլևս չհարգելով:

Համո Սահյանի բանաստեղծության մեջ այդ գոյը հայր է, նահապետական մեծ գերդաստանից թաքուն է ապրում որդու ծննդյան իր զուսպ ուրախությունը: Ռուսական մի պատմվածքում նա հանդգնել է իր դժբախտությունը «նուբ»-ով իմաստավորել, իսկ Շոլոխովի վեպում արդեն հեղափոխական Վալետ է, հակահեղափոխական կազակական ճամբարից խուսափելիս կազակները բռնում, իր կազակ ընկերոջը մի-երկու ճիպոտով հայրաբար խրատում, ոչ-կազակ իրեն, մի տեսակ իրենք էլ չնկատելով, սպանում անցնում են, չգիտեն, որ նույնպիսի մի վալետ էլ իրենք են, վաղվա օրը իրենք են ջարդվելու իրենց նման ուրիշ վալետներից: Չարենցյան ահռելի «Շավարշում», անպատասխան հարցերի ծովում նա խեղդվում է, թշնամական ողջ կյանքը դև է դառել մտել նրա հոգին, նրա խեղճ միտքը չի զորում իր վարքի վրա, նա եռում է, նրա հրաբուխը ելք չի

գտնում, նա հիմա-հիմա կպայթի, փսխուքն ու մաուզերի պարպումը նրան չեն լիցքաթափում: Որպես հուշկապարիկի երգը Ոդիսևսին, թշնամու նենգ ու հզոր միտքը հագել, իր վրա է քաշել ֆոլքներյան տհաս Մունկի ձայնը, իր ձայնի ետևից Մունկը կործանվելու է գնում՝ ինչպես Ոդիսևսը հուշկապարիկի երգի ետևից:

Այս Չարենցը, Ֆոլքները, Գոդարը, Բակունցը, Ղուկասը, Պլատոնովը և դեռ շատ ու շատ հեղինակներ ու գործեր, նկարիչներ ու երգեր,- սրա՞նք են ահա ինձ մատնացույց արել իմ հայրենիքում ինձ տրված իմ կյանքի ժամանակը, իմ կյա՞նքն է աշխարհի ծով գրականությունից մատը դրել այս հեղինակների ու գործերի վրա՝ չգիտեմ, երևի թե և՛ մեկը, և՛ մյուսը, երևի թե երկուսը միաժամանակ:

Ուզում եմ ձայնավորել այդ չծավալված Մոցարտին, աստվածացնել եմ ուզում այդ չբացահայտված Քրիստոսին, ուզում եմ ազատել այդ կաշկանդված Պուգաչովին, այդ չբացված, սերմի մեջ խեղդված ծաղկի բույրը ուզում եմ արձակել: Կաստվածանա՞, կծավալվի՞, կապերը կթոթափի՞: Չարենցը նրա մասին այս է ասել. «Մյուս դաշտերը՝ չլուտ ու չոր, Եվ դաշտերում այն՝ գրաստ ապին,- Հագին նեխած մի, ցեխոտ շապիկ,- Հոգին միշտ համր, հրատոչոր»: Ուզում եմ տեսնել՝ այդ ապին իսկապե՞ս գրաստ է, նրա հոգին իսկապե՞ս համր է, երբ կառավարում են՝ ինքնասիրությունը չի՞ վիրավորվում, երբ ձագերը խլում են՝ չի՞ մեռնում, հոգու խորքում մեզ չի՞ անիծում, ինքը իր միտքը ու բովանդակությունը ունի՞, թե՞ անհրաժեշտության առաջ իր պարտքի մասին մեզանից առած խոսքն է իր բովանդակությունը:

Քառասուներեքի փետրվար-մարտին մայրս տնից երեք օրով կորավ. ո՛չ ապսպրանքով, այլ որևէ զգայարանով կռահել էր, որ մեր անասունը Չորագեղ ջարդվում է, պիտի փրկելու գնա: Մեկը փրկեց, այդ մի կովը երեք երեխայիս պահեց: Մեր գյուղից Չորագեղ ու ետ՝ 70 կմ է, ճանա-պար-հին մի երկաթուղային կայարան, մի գյուղ ու մի-երկու տեղ լքված գո-մեր են, այդ գոմերում այդ աղջիկ-կինը, այդ նիհար, ծանրած, ահա-ահա ծնող կովի հետ երկու գիշեր է անցընրել, երկու ցերեկ՝ խնդրելով,

հրելով, լացելով, անիծելով ու հուսալով ժամը ժամի վրա մոտեցել է իր գյուղին, որ մինչև ամուսնու զորակոչվելը թշնամական գերության ճամբարից լավ չէր: Եկան, մեր տնից ներքև զառիվերին դեմ առան ու ձմեռվա արևի մեջ փլվեցին: Ես ուզում եմ իմ հայրենիքի 70 կմ այդ ճանապարհից «Մագելլանի սխրանք» հանել և այդ կնոջը անհատականություն դարձնել, եթե չդառնա՝ նշանակում է շատ ճիշտ են անում նրանք, ովքեր իրենց խաչը նրապեսների շալակն են տալիս ու ետ էլ չեն նայում տեսնելու՝ բերո՞ւմ են թե չեն բերում:

Զգուշավոր, վախկոտ ու ինքնամեծար մեկը, գոնե՝ այսօրվանից զգուշացող ու քաղաքից վախեցող, իր գյուղի տնտեսության խարխրվելը աշխարհի կործանում է համարել, շարքային մեղավորի իրենից կարգի և օրինակելիության անդրի է ստեղծել, դրել մեղքով ու հանցանքով ապրող մեր մարդկանց հրապարակում. «հասարակները», «ապիները», «վալետները» նայելու և իրեն ընդօրինակելու են: Ես կարողանալո՞ւ եմ, նրանից սահմանազատվելով, նրան «գեներալ Ֆրանկո», «հասարակների պաշտպան», «ժողովրդի հայր» դարձնել այն դեպքում, երբ ինձ հազվադեպ եմ խոստովանում, որ նախկին լուռ հպատակների այդ համայնքի քայքայման համար նրա տագնապը իր կերակրողին կորցնող քաղքենուս տագնապն է և պոետի մաքուր անհանգստություն չէ իրենց դարավոր թիարանը լքած այդ արգոնավորդների հետագա ճակատագրի համար:

Ուզում եմ տեսնել, թե ով է այդ հասարակը, որ իրեն այդպես սիրաշահում, իրեն կորցնելուց այդպես վախենում, իրենով սպառնում, իրենից զգուշանում, աղայաբար այդպես կարեկցում ու աղայաբար քամահրում, իրեն այդպես կռան են դարձնում և զնդան են դարձնում, իր հնազանդ լռության վստահ հաշվարկով՝ իր անունից ու իր դեմ արշավանքի են ելնում խոսքի ու զենքի տիրակալները: Բայց կկարողանա՞մ, դուք կարո՞ղ էիք, խոսքի ու արկի այս տարափի տակ կանգնել ու անկողմնակալորեն տեղեկացնել, թե «այստեղ հասարակներ չեն ու հայեր չեն, այստեղ դուք ինքներդ եք», երբ ինձ խոցել են հենց որպես հայի ու հասարակի, երբ իրենց ամբոխով ոտնոտակ են տվել իմ «ամբոխը», որի մնացորդը 70 տարի անց

այսօր էլ երկրից երկիր է փախչում և հայրենիք չի գտնում ու չի գտնելու: Ողբերգակի փոխարեն ես չպիտի՞ դառնամ ողբերգության շարքային զոհ:

Հակոբ Մնձուրի գրող ունեինք, մահացավ 78-ին, Ստամբուլ, 92 տարեկանում: Տեղահանության ու եղեռնի ժամանակ երկրի խավար խորքերում չէր եղել, որպեսզի տեղահանվեր ու ոչնչացվեր անանուն հասարակների իր բազմության հետ, և այնքան նշանավոր չէր եղել, որպեսզի 600 ականավորի մեջ չքացվեր հենց մայրաքաղաքից. զինվորի կապերով կապել են, բանակի համար հաց է թխել, հետո բեռնակիր է եղել, ապա եկեղեցու լուսարար: Ես չգիտեմ իրեն այնտե՞ղ էի հիշելու, երբ իմ և ուրիշների ապրած իրականությունից պատահական էջեր էի պոկում, թե՞ այստեղ, երբ փորձում եմ այդ իրականությունը յուրացնել. երևի և՛ այստեղ, և՛ այնտեղ, որքանով ինքը Մնձուրին է բաժանում, ավելի ճիշտ՝ միացնում հասարակների նրանց և գրողի իմ ճակատագրերը: 350՝ երեք հարյուր հիսուն պատմվածք ու պատկեր է թողել, մեկի մեջ մի հարց չկա - «Վերին Եփրատի հովտում, եղբայր, Մնձուր մանիշակագույն լեռներում հայոց մի գավառ ու Արմտան գյուղ, գյուղում երեք երեխա ու կին, հայր, մայր, տատ ունեի, ի՞նչ եղան, ձեր Պոլսում լավ աշխատելուց հետո երկու-երեք տարին մեկ բեռուբարձով տեսության էի գնում, ո՞ւր չքացրիք, ո՞ւր կորան». միայն՝ տարվա որ եղանակին ինչ էին հագնում, ինչ էին երգում, ինչ էին ուտում, ինչ էին ցանում, ո՛ր բլուրը ինչ աղբյուր էր խփում, և միայն մի անգամ՝ իր նման որբերի այն ժամի մասին, երբ սպասում են խմորի ելնելուն. «Ուրիշ նիւթ չունէին անոնք, Երկրին վրա, անցեալին վրա կըխոսէին: Պոլիսը, ընթացիկ կեանքը չէր շահագրգռէր զիրենք, ներկան գոյութիւն չունէր կարծես իրենց համար: Ամեն գիշեր հին մարդիկը, հին օրերը կըկենդանացնէին, հեքիաթներուն պէս պատմելով այդ բոլորը, որոնք իրոք հեքիաթներ եղած էին: Մեկը կըվերջացնէր, միւսը կըսկսէր: Պատրանքը իրենց իրականութիւնն էր»:

Ասում եք՝ թող կախվեր, քարափից թող ծովը նետվեր, թող չապրեր: Եվ կախվողնե՛ր, և խելագարվողնե՛ր, և ազգային այլ կեղևի մեջ ապաստան փնտրողնե՛ր եղել են, ինքը չի կախվել ու

չի հեռացել - մանրիկ պատմվածքներով ու պատկերներով քարտեզագրել է իր հուշերի երկիրը: Չմեղադրենք և նույնիսկ չքամահրենք: Անհամեմատ հեշտ է եղբայր ժողովուրդների հաղթական միասնության մեջ կանգնել և ամբողջ աշխարհի մարդկության հետ ֆաշիզմից հաշիվ պահանջել Խատինի համար, և անասելի դժվար է ապրել մի երկրում, ուր քո հայրենիքը ջնջողները ազգային հերոսի պատվանդանի են բարձրացվում, և հարցնել ինչ-որ Արմտանի մասին:

Եվ թեկուզև հեռուստավկայության մի կարճ պատկերն անգամ՝ ուր «հանուն հավատի» զոհված իրանցի երեխա-պատանիները պառկած են երկնային դրախտի բանալիները պարանոցներին, և պոլպոտյան կոմունաներում ոչնչացված երեքուկես միլիոն մարդկանց մասին երկտողանոց մանրատառ մի տեղեկությունը բավական է, որ ձեռքդ անհուսորեն թափ տաս նույն հանդուգն խաբողների և վեհերոտ խաբվողների, նույն հովվի և հոտի, մարգարեի ու բազմության այս հավերժորեն նույն աշխարհի վրա և սարսափով մտածես, որ այդ փրկիչներն ու զոհերը անխառն փաստի իրավունքով վաղը գիրք են խուժելու և մյուս օրը պատմության և սուրբ գրի իրավունքով վերադառնալու են դարձյալ իրականություն,- բայց և նույն աշխարհն է իր այդ մեռած տեղերի ու անկենդան ժամանակների վրա «ԿԵՂԾԻՔ է» խարանել: Իր ճնշիչ ծա-վալներով, իր համոզիչ տևականությամբ հանդերձ՝ կեղծիքը ճշմարտություն չի դառնում: Եթե պոլպոտյան կոմունաները ոչ թե 3,5, այլ 350 միլիոն մարդ խժռեին՝ այդքան անգամ էր ժխտվելու մեկ և նույն կեղծիքը և հաստատվելու նույն ճշմար-տությունը - հոգիների կողոպտիչները մարդասպաններ են:

Եվ ուրեմն ի՞նչ գեղեցիկ են նրանք, ովքեր մարդու համար գրում են ի՛ր խոսքը, մարդու մեջ բացում են ի՛ր լույսը, արձակում ի՛ր ձգտումը: Պիտի ցանկանայի նույնազոր եղբոր նման միանալ նրանց և իմ անձնական ու ազգային թուլությունը չբացահայտել, քանի որ երկրի վրա ինչ որ լինում է՝ լինում է նախ խոսքի մեջ: